

Եզրագրուած և թոյլ չի տայ, որ զանա-
զան դաշնակցութիւններ թուլացնեն Անգ-
լիայի ազդեցութիւնը և ոյժը այդ երկրի
մէջ, որ Հնդկաստանի գլխաւոր ճանապարհն
է: Սարիւսբիւրի պնդում է, որ եզրագրա-
կան դժուարութիւնները պատճառելի է
թիւրքիան Չերիօգորիային և Յունաստանին
նրա երկիրները տալու համար վրէժխնդիր
լինելու նպատակով: «Times» լրագիրը,
հիմնվելով Սարիւսբիւրի յայտնած մտքերի
վրա, յոյս է յայտնում, որ անգլիական կա-
ռավարութիւնը, որքան էլ նա ցանկանայ
բարեկամական յարաբերութիւններ պահ-
պանել Ֆրանսիայի հետ եզրագրական հար-
ցի վերաբերութեամբ, կը հասկանայ նրան,
որ Ֆրանսիական շահերը եզրագրուած այն-
քան նշանակուող չեն, որքան անգլիական-
ները: Այդ գործի մասին, «Times»-ի խօս-
քերի համեմատ, զանազան կարծիքներ չեն
կարող լինել:

Լուր է տարածված թէ Կուբինի մէջ
փորձել են սպանել առաջին մինիստրի որ-
դի շերերա Վարդապետին, որ Նիւյորքի
կառավարելու համար Ֆորտերի օգնական
է նշանակված: Ներքին գործերի մինիստր
Հարիստ մի սպանալից նամակ է ստացել
Պարնելին կալանաւորելու առիթով: Լրա-
գիրները մէկի թղթակցը տեսնելով է
Պարնելի հետ բանտի մէջ: Պարնել այդ
տեսութեան ժամանակ կարծիք է յայտնել,
որ նրան կալանաւորելը չի ֆիստի իրան-
զական գործին և որ ժողովուրդը մինչև
վերջը կարող է իր պարտականութիւնը
սրբութեամբ կատարել: Նա հաւատացած
է, որ կառավարութիւնը չի համարձակվի ոչն-
չացնել կալուածական միութիւնը: Նրան-
զական ֆերմերները մեծամասնութիւնը
վճարել է չը վճարել կալուածատէրերին կա-
լուածական տուրքերը, քանի որ Պարնել
կալանաւորված կը լինի:

Անգլիական երեք գունդեր հրաման են
ստացել Նիւյորքի ուղևորվել: Լորդ Կանց-
լեր կարգադրել է արքէն, որ Պարնել այլ
ևս չը լինի Ուիլիսոսի կոմսութեան հաշ-
տարար դատաւորների թուում: Նորիւրում
Կուբինում գարձեալ անկարգութիւններ են
պատահել: Ամբողջ իրան հակակրկի խում-
բագրատուների պատահանները ջարդել է
քարեր գցելով, փախցրել է պոլիցիականնե-
րին և Կէս գիշերին զօրքեր են կանչված:

Ինչպէս երևում է այդ տեղեկութիւն-
ներից իրանդացիք չափազանց վրդովված
են և կալուածական միութեան նախկին
խաղաղ վարդապետութիւնը փողոցային
կռիւների է փոխվել: Միութեան յարգելի
առաջնորդների կալանաւորելու աւելի ոյժ է
տուել իրանդացիներին ցոյցներին Գործադ-
րած խիստ միջոցները ստիպելին իրանդա-
ցիներին թողնել չափաւոր և օրինական
ճանապարհը: Ամբողջ այժմ առանց ա-
ռաջնորդների է մնացել և նրա գարոյթին
օհման չը կայ: Գարստանի այժման մի-
նիստրութեան նշանաւոր անդամներից մէկը
Ջոն Բրայտ շատ անգամ յայտնել է, թէ
«ոյժը փրկարար միջոց չէ», բայց տարա-
բարդագրար այս անգամ նրա ձայնը փոք-
րամասնութեան կողմն է մնացել:

ՖՐԱՆՍԻԱ

Գամբետտայի մինիստրութիւնը, որ վերջ-
նականապէս երեւի միայն նոյեմբերին կը
կազմակերպվի, արդէն տեսն տեսակ դատա-
րութիւնների առարկայ է դարձել ոչ թէ
միայն Ֆրանսիայի, այլ և ամբողջ Եւրոպայի
մէջ: Գամբետտայից սպասում են ինքնու-
րոյն և եռանդոտ արտաքին քաղաքագա-

նութիւն, որ ընդունակ լինի բարձրացնել և
հաստատել Ֆրանսիական հանրապետու-
թեան հեղինակութիւնը եւրոպական գոր-
ծերի մէջ: Ամենքը հասկանում են, որ
1871 թուականի դիկտատորը, այժման
հանրապետական ամբողջ կուսակցութեան
գլխաւոր առաջնորդը և վերջին տաս տա-
րիների ընթացքում ամենաժողովրդական
մարդը ամբողջ Ֆրանսիայի մէջ, չի բաւա-
կանանայ այն անզոյն դերով, որով բաւա-
կանանում էին նրանից հովանաւորված և
նրա ձեռքով ընկած մինիստրները, ինչպէս
Մարսեր, Վաղդինգտոն, Ֆրէյսիէ և ժիւլ
Ֆերրի: Գամբետտա մինչև այժմ աւելի
բարձր և ազդող դերք ունէր, քան թէ մի-
նիստր-նախագահի պաշտօնը, և եթէ այ-
ժմ նա վճռել է ձեռք տալ մինիստրա-
կան անմիջական գործունէութեանը, ու-
րեմն նա աւելի կանէ, քան թէ նրա հա-
մեստ նախորդները, և կաշխատի դրակա-
նապէս իրագործել իր ընդարձակ քաղաքա-
կան պրոգրամը, որ նա շատ անգամ մեծ
աջողութեամբ մեկնում էր իր փայլուն ճա-
ռերով:

Գամբետտայի ապագայ մինիստրութիւնը
առանձին հետաքրքրութեամբ քննվում է
գերմանական մամուլի մէջ, որ սովոր է այդ
ճարտարախօսին միացեալ գերմանական
կայսերութեան ամենաօրինակ թշնամի հա-
մարել: Գամբետտայի և իշխան Բիսմարկի
գաղտնի տեսութեան մասին տարածված
յուրերը շատ յարմար ժամանակ առաջ ե-
կան: Նրանք մասամբ բաւականութիւն
տուին գերմանացիների ազգային ինքնասի-
րութեանը և հանգստացրին նրանց Գերմա-
նիայի և Ֆրանսիայի ապագայ յարաբերու-
թիւնների վերաբերութեամբ: Գերմանացի-
ները ցանկանում են հաւատալ այդ կաս-
կածելի փաստին և իսկապէս հաւատում
են, հիմնվելով Բելլիի պաշտօնական լրա-
գիրների լուրերի և զանազան լեպորտաժոր-
ների Ֆրանսաստիկական հաղորդութիւն-
ների վրա: Այժմ Գամբետտայի մասին ամ-
բողջ Գերմանիայի մէջ խօսում են մեծ հա-
մակրութեամբ:

Բարտեղեմի Սենտ-Ելեր նորիւրում յայտ-
նեց, որ նա Գամբետտայի Գերմանիա ու-
ղևորվելու և իշխան Բիսմարկի հետ տեսն-
վելու մասին տարածված լուրերը կատա-
րելապէս անհիմն է համարում:

Ընտրողական ցոյցերը սենատի անդամներ
ընտրելու համար արդէն սկսված են: Մի
քանի նահանգների ընտրողական ժողովները
մի նախագիծ են կազմել, որ սենատի անդամ-
ների ապագայ ընտրութիւնների համար
հիմք կարող է լինել: Այդ նախագիծի մէջ
գլխաւոր դերը խաղում է սենատի վերա-
նորոգութիւնը Գամբետտայի ոգով, այսինքն
որ սենատը իրաւունք չունենայ վերաքննել
պատգամաւորների ժողովի գործունէու-
թիւնը: Այդ նախագիծը կազմելու ժամա-
նակ ժողովներին մասնակցել է սենատի նա-
խագահ Լէօն Սէ, որ Գամբետտայի կառա-
վարութեան մէջ ֆինանսների մինիստրի
պաշտօն պէտք է վարէ:

Գերմանական լրագիրների թղթակիցնե-
րը անդադար նորանոր տեղեկութիւններ են
հաղորդում Գամբետտայի ճանապարհորդու-
թեան մասին Գերմանիայի մէջ: Նրանց
պատմածներից երևում է, որ տեսութիւնը
կայացել է ոչ թէ վարցիներ, այլ Ֆրիդրիխ-
սրուէի մէջ, որտեղ իշխան Բիսմարկն էլ
գաղտնի ճանապարհորդել է: Թղթակիցնե-
րից մէկը պատմում է, որ նա Գամբետտա-
յին տեսել է Լիւբեկի մէջ, բայց չը բա-
ւականանալով իր տեսածովը վկայ է բե-
րում վաշխագտօն ուղևորված քաղաքագետ

Նլէօցերին, որ իբր թէ պատահամբ Գամ-
բետտայի դրացի է եղել հիւրանոցի մէջ:
Մինչև Նլէօցեր մի հերքում կը տպի, այդ
լուրը ճշմարտութեան տեղ կընդունեն:
Գամբետտային իբր թէ տեսել են Գանցիգի
և Աէօնի գրքերի մէջ և այդ բանը ապա-
ցուցանելու համար հաղորդում են, թէ
«մի կարճահասակ օտարական եկեղեցու
մուտքն էր փնտում նրա հնութիւնները
նայելու համար»: Առհասարակ այդ պատ-
մութիւնները բուն կատակերգական բնա-
ւորութիւն ունեն և Ֆրանսիայի մէջ նրանց
կարեւորութիւն են տալիս յետադիմական
լրագիրները, Գամբետտայի ճանապարհոր-
դութիւնը «գաւաճանութիւն» անուանելով:

ԲՈՒԳԱՐԻԱ

Գերմանական մի քանի լրագիրների տե-
ղեկութիւնների համեմատ բոլգարական մի-
նիստրներից երեքը արդէն ձանձրանում են
իրանց պաշտօններից: Նրանցից մէկը, զըն-
դապեալ Բեմիլիգեն այն եզրակացութեան
է հասել, որ նա իբրև օտարական հազիւ
թէ կարողանայ հանգստացնել վրդովված
բոլգարացիներին, մինչդեռ այդ գործը ան-
հրաժեշտ է կարգապահութեան և օրէնք-
ների ոյժը պաշտպանելու համար: Ինչպէս
հաւատացնում են, Երեւելի և Վուլկովիչ
մինիստրները նոյնպէս մտադիր չեն այսու-
հետե վարել իրանց պաշտօնները: Միւս
կողմից բոլգարական իշխան Ալէքսանդր
բարեկամացել է Տօպչիսելօփի և Կիսեակօփի
հետ, որոնց համար նա կարող է ամեն տե-
սակ պաշտօն որոշել: Առաջինը իշխանի
մասնաւոր քարտուղար է դարձել, իսկ երկ-
րորդը փոստային և հեռագրական հաղոր-
գակցութիւնների մինիստր: Յոյս ունեն, թէ
Կիսեակօփ չափազանց կը պարգանէ փոս-
տային գործը Բոլգարիայի մէջ, որ չափա-
զանց վատ դրութեան մէջ է: Կիսեակօփ
նոյն պաշտօնը վարել է Արեւելեան-Ռումե-
լիայի մէջ, ուր այժմ փոստային և հեռա-
գրական գործերը նրա աշխատանքներով
շատ լաւ կազմակերպված են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լօնդոնից հեռագրում են որ Կլաւտոս
չուտով կը ստանայ պէրի տիտղոսը: Եթէ նա
կանցնի լօրդերի ժողովը, ուրեմն այնու ամե-
նայնիս կը մնայ մինիստրութեան մէջ, բայց ե-
րեւ առաջին մինիստրի պաշտօնը կը յանձնի
Գրեյնիլին: Բրայտ և Չամբերլին մինիստրները,
որոնք չեն հաւանում այժման կառավարութե-
նից Նիւյորքիայի մէջ գործ դրվող ճնշող մի-
ջոցները, դիտաւորութիւն ունեն իրանց պաշտ-
ոնից հրաժարական տալ:

— Սորաժոքէ լրագրին գրում են որ գլխու-
րական իշխանութիւնը Անգլիայում դիտաւորու-
թիւն ունի ուղարկել իրանդական մի ամբողջ զօ-
րաբաժինը Հոլանդիայի իրանդական լիգայի ժամա-
նակաւոր նախագահ Ալետուէլ քահանան, հետե-
ւալ խօսքերն ասեց լիգայի վերջին նիստի ժա-
մանակ: «Եւ մինչև այժմ իրանդական կաթո-
լիկ հոգեւորականութիւնը չէր մասնակցում որպէս
ղեկավարող ոյժ իրանդական ազգային շարժման
մէջ, սահմանափակելով իր համակրութիւնը դէպի
ազգի իրաւունքները միմիայն սոցիալներով, բայց
չուտով իրանդական հոգեւորականութիւնը կա-
պացուցանի բացարձակ կերպով, որ հաստատա-
մտութեամբ և գործնական կերպով ծառայում է
ազգային գործին: Հոգեւորականներն էլ կազմել
են իրանց միջոց մի ազգային հոգեւոր լիգա: Կա-
ռավարութիւնը չի համարձակվի կալանաւորել և
բանտարկել ամբողջ իրանդական հոգեւորակա-
նութիւնը և ազգը այդ չի թոյլ տայ, Այդ պատ-
ճառով այն օրը հեռու չէ, երբ Անգլիայի իշխա-
նութեանը իրանդիայի մէջ վերջ կը դրվի և իր-
անդիան կը ստանայ իր սեփական պարամիտա-
թուելու ժամանակը անցնել է, այժմ հառել է գոր-
ծելու ժամանակը:»

— Բերն քաղաքից գրում են, որ գերմանացի
ստրատեգները շատ են դրազված Շվեյցարիա
ամրացնելու հարցով: Կարմառախ մի լրագրի
մէջ տպված մի գերմանացի գեներալի յօդուածը
նորիւրում խորհուրդ էր տալիս Շվեյցարիային
ամրացնել բերդերով իր սահմանները և միւր-
ցիայի տեղ կազմակերպել հաստատ, մշտական
զօրք: Շվեյցարական ամբողջ մամուլը վերա-
բերվեց այդ առաջարկութեանը արհամարհան-
քով: ասելով որ ոչ թէ Շվեյցարիան պէտք է
օրինակ առնէ Գերմանիայից անազին զօրք պա-
հելու մէջ, որ միշտ սպասում է երկրի ոյժերը
ամենաթարմ մարը երիտասարդութեան ծառայել
ստիպելով և վերջնելով ժողովրդից անտանելի
հարկեր մշտական զօրքը պահելու համար, այլ,
ընդհակառակն, զօրեղ Գերմանիան պէտք է օ-
րինակ վերցնի փոքրիկ և ազատ Շվեյցարիայից,
զինաթափ անելով իր անազին զօրքերը:

— Թիֆլիսի առաջ լրագիրները արտասուք են
մայրաքաղաքի լրագիրներից այն լուրը, որ իբր
թէ Ռուսաստանը պատրաստ է, եթէ Թիւր-
քիան անկարող կը լինի վճարել իր պատերազ-
մական ծախսերը, վարձատրվել կօտորիտուցիայի
տեղ միացնելով Անդրկովկասին Թիւրքաց Հա-
յաստանի մի մասը:

— «Times» լրագիրը նորիւրում տպել է մի
շատ համակրական յօդուած հայերի մասին (Ար-
թութիւնը հայերի մէջ) (Education among the
Armenians) վերնագրով: Այդ յօդուածը նկա-
րագրում է Հայաստանի մէջ ազգային կրթու-
թեան գործի դրութիւնը: Այժմ քննութիւնը կա-
խատանում թիւրքաց Հայաստանին և հայոց
ազգին:

— Փարիզից լրագիրներին հեռագրում են հոկ-
տեմբերի 12-ին Նեոնեալը Այսօր Ֆլեյմանց ցիւր-
կում կայացաւ արմատականների միտնից Տունի-
սի մէջ գործերի դրութիւնը քննելու համար:
Բիլլինգ ճառ խօսեց, որի մէջ կրկնեց անհաշտ-
ների լրագիրների բոլոր մեղադրանքները: Ժո-
ղովը համարեա միաձայն ընդունեց Նեոնեալ
վճիւրը՝ հրաւիրել պատգամաւորների ժողովի բո-
լոր անդամներին անյապաղ ուղև Տունիսի ար-
չաւանքի քննութիւնը: Այժմ քննութիւնը կա-
պացուցանի, որ սահմանադրութիւնը խանգար-
ված է և հայրենիքը մասնավոր, այն ժամանակ
պատգամաւորների ժողովը պարտաւոր է դատի
ենթարկել մինիստրներին և նրանց համախոհ-
ներին, որոնք թէ անձամբ և թէ իրանց կարո-
ղութեամբ պատասխանատու են հայրենիքի ա-
ռաջ:

— Լօնդոնից լրագիրներին հեռագրում են հոկ-
տեմբերի 12-ին, որ կիրակի, կէսօրից յետոյ
Հայրապետի «Մեծ-Բրիտանիայի ազգային հո-
ղային լիգայի» կողմից մեծ միտնից կայացաւ:
Միտնիցին մօտ 50,000 մարդիկ էին մասնակ-
ցում: Երեք պատգամաւորներ ճառեր խօսեցին:
Միաձայն ընդունված վճիւր մէջ պախարակում
են կառավարութեան գործողութեան եզանակը
իրանդիայում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԿ, 16 հոկտեմբերի: «Пра-
вит. Вѣст.» լրագիրը հերքում է Օրբու-
շեկին Սիբիրիայի գլխաւորահանգստական
նշանակելու մասին լուրը: «Новое Время»
լրագիրը հաղորդում է հոկտեմբերի 15-ին
էկսպերտները վճնեցին, որ գաղթականու-
թիւնը Ռուսաստանի զանազան տեղերում
միատեսակ հարկաւոր է: Անհրաժեշտ է
որոշել ամենամեծ պէտք ունեցող տեղերը:
Պետական հոգեւոր հիմք են ձանաչված գող-
թականութիւնները ապահովելու համար:

Վ.Ի.Ն.Ա., 15 հոկտեմբերի: Այսօր 71½
ժամին երեկոցիան իտալական թագաւորը և
թագուհին հասան Վիեննա: Կայսրը, Թա-
գաժառանգը և էրցհերցոգ նրանց օրտա-
գին ընդունելութիւն արին երկաթուղու
կայարանի վրա:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԿ, 16 հոկտեմբերի: Պետա-
կան բանկի 5% տոմսակր առաջին շրջանի
արժէ 94 ռ. 62 Կ., երկրորդ 92 ռ. 50 Կ.,
երրորդ 93 ռ. 50 Կ., չորրորդ 92 ռ.,
ներքին առաջին 5% փոխառութեան տոմ-
սակր արժէ 220 ռ. 25 Կ., երկրորդ 214 ռ.
25 Կ., արևելեան առաջին փոխառութեան
տոմսակր արժէ 90 ռ. 12 Կ., երկրորդ 90
ռ. 12 Կ., երրորդ 90 ռ. 12 Կ., ոսկի 7 ռ.
67 Կ.: Թուսաց 1 ռ. Լօնդոնի վրա արժէ
25,87 պէնս, Ամստերդամի վրա 130,75
պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա ար-
ժէ 221 մարկ 25 պֆ., Փարիզի վրա արժէ
273 ֆրանկ 12 սանտիմ: Բօրսայի տրա-
մաղրութիւնը առաջ թոյլ էր, յետոյ ա-
մուր:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ